


ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Խնայողութիւն :

ԽՈՆԱԿԱՆԱՓՈԸ՝ կը գործածուի օդին մէջի եղած թացութիւնը կամ չորութիւնը խմանալու համար : 1 ասն զի օդը որչափ ալ չոր ըլլայ , միշտ մէջը խոնաւութիւն կը գտնուի : Եւ բանիս փորձը ընելու համար , թէ որ պարզ ու չոր որ մը ամանի մը մէջ ցրտացուցիչ բան մը դնելու ըլլանք , կը տեսնենք որ ամանին դրսի մակերեւութին վրայ խոնաւութիւն կը նստի , որ օդին մէջ գտնուած գոլորշիքն է : Եւ նիւթերն որ խոնաւութիւն կը ծծեն՝ կրնան խոնաւաչափ ըլլալ . բայց ամենէն աղէկն ու գործածականը Սոսիւրի² խոնաւաչափն է , որ մազէ շինած է : Եւ որ մէկ ծայրը հաստատուն



է , վարի ծայրէն ալ ծանրոյ մը ունի . օդը որչափ թաց ըլլայ՝ այնչափ աս մազը կ'երկնայ , իսկ չոր եղած աւտենը կը կարճնայ , ու որչափ կարճնալը քովի ցուցակէն կ'իմացուի . բայց գիտնալու է որ բնական մազը եղող ըլլալով , օդին խոնաւութիւնը դիւրաւ չի կրնար ծծել . անոր համար առաջուց պէտք է աղէկ մը եփել մազը ջրով , ու մէջն ալ քիչ մը սապոն ձգելու է , որով աղէկ մը կը մաքրուի :

1 Hygromètre.

2 Saussure.

Իսկ քովի կը շրջանակը հարիւր հաւասար աստիճան բաժնուած է . զորն կը ցըցնէ մազին սաստիկ չորութիւնը , որ ըսել է թէ անկէ աւելի չկրնար կարճնալ , իսկ հարիւրը կը ցըցնէ մազին սաստիկ թացութիւնը , որ ըսել է թէ անկէ աւելի ալ չկրնար երկնալ : Արնայ մէկը աս շրջանակը հարիւրէն աւելի կամ պակաս աստիճան բաժնէ . բայց միշտ չոր եղերքը զոր սեպելու է , ու անոր յարմար աստիճան բաժնէլու է :

Է . (Ժ) Ե օդը քիչաւէն հարեալ է մեր կենացը համար :

ՍԵՐ կենսաբան պահողը օդն է . մարդու կուրծքը մէկ վայրկեանի մէջ 30 անգամի չափ կ'ելլէ ու կ'իջնայ՝ օդը ներս ընդունելու ու դուրս տալու համար , աս գործողութեան շնչառութիւն կ'ըսենք : Աստի որ և իցէ կենդանի թէ որ մէկ քանի վայրկեան օդ կամ շունչ չկարենայ առնել , սաստիկ նեղութիւն կը քաշէ . իսկ եթէ ան միջոցը քիչ մը երկարի , բոլորովին կ'անշնչանայ , այսինքն կը մեռնի . և սովորաբար շունչ չառնուլը մահ հուան նշան է : Հիմա տեսնենք թէ աս բանիս փորձը քիչաւէն կրնանք ընել :

() Դահան գործւոյն ընդունարանին տակը կենդանի մը կամ թռչուն մը գիր , ու քանի մը անգամ միտքը շարժէ . երբոր ամանին մէջի օդը քիչ մը անօսրանայ , կենդանին կը սկսի անհանգիստ ըլլալ , կամաց կամաց կ'ուռի , ետքը կ'անշնչանայ կ'իյնայ , ու թէ որ քիչ մը ատեն այնպէս թողուս՝ կը մեռնի : Անդանւոյն ուռելուն պատճառը՝ մարմնոյն մէջի օդին անգայտանալն է , որ կ'ուզէ դրսի անօսրացած օդուն հետ հաւասարաւ կշիռ ըլլալ , և մարմնէն դուրս ելլելու ժամանակ՝ ճամբուն մէջ եղած արգելքներն ալ դուրս կը վանէ . ուստի աս փորձին ատեն կենդանւոյն փորն